ISSN 1829 - 0043 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԼՐԱԲԵՐ (ՀՃԱԼ). 2015. Հ.12, N 3

ՀՏԴ 330.42 ԷԿՈՆՈՄԻԿԱ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ժ.Ս. Մխիթարյան

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ*

«Սահմանադրությունն առանց
սահմանադրականության,
Լեզվակը պոկած զանգի է նման,
Որը ոչ մի ղողանջ չի արձակի»:

XX դարն ողջ աշխարհում նշանավորվեց սահմանադրությունների ընդունման հաղթարշավով, ինչը, վստահապես, կարելի է դիտել որպես այդ դարի մեծագույն ձեռքբերումներից մեկը: Այդուհանդերձ, համանման բովանդակությամբ սահմանադրությունների հանդեպ տարբեր երկրներում կարող են առկա լինել գերտարբեր ընկալումներ՝ սկսած «Աստվածաշնչին համազոր գրվածքից» ընդհուպ մինչև՝ որպես «Կենացների ժողովածու»: Նման ծայրահեղությունների հիմնորոշիչը մի պարագայում սահմանադրականության մշտառկայության, իսկ մյուսում՝ դրա հիմնովին բացակայության իրողությունն է: Ուստիև, XXI դարի համաշխարհային գերակա միտումը սահմանադրականության հաստատումն է լինելու, որին կայուն նեցուկ հանդիսանալու պատրաստակամ առաքելությամբ է օժտված «Սահմանադրականության գնահատման հետազոտական ծրագիրը», որի կենսագործման անդրանիկ հանգրվանի՝ «Սահմանադրականության գնահատման հայեցակարգի» գծով հիմնարդյունքների ներկայացմանն է նվիրված սույն աշխատանքը:

Առանցքային բառեր. *սահմանադրականություն, գնահատում, համաթիվ, հայեցակարգ:*

Ներածություն: «Սահմանադրականության գնահատման հետազոտական ծրագիրը» (ՍԳՀԾ) 2014 թ. կեսին հիմնադրված գիտահետազոտական նոր ուղղություն է, տեղակայված սահմանադրական տնտեսագիտության [1,2] տիրույթային սահմաններում, որի վերջնանպատակը սահմանադրականության մակարդակի գնահատականի ստացումն ու սահմանադրականության մշտադիտարկման համար անհրաժեշտ հիմքերի նախապատրաստումն է: ՍԳՀԾ-ի սևեռումային կենտրոնը կլինի Հայաստանը, իսկ գնահատման հորիզոնը՝ համաշխարհը: Ծրագրի կենսագործումը կընթանա եռափուլ ընթացքով. նախ կմշակվի սահմանադրականության գնահատման հայեցակարգը, այնուհետև՝ մեթոդաբանությունը: Վերջիններիս ելքարդյունքների զուգադրության արդյունքում կձևավորվի սահմանադրականության մակարդակի քանակական գնահատականը, որն էլ, իր հերթին, կայուն հենասյուն կհանդիսանա հետազոտական նոր փուլի մեկնարկման՝ սահմանադրականության մշտադիտարկման համար: Սկզբից ևեթ ծագում են մի շարք օբյեկտիվ հարցադրումներ. ի՞նչ է սահմանադրականությունը, ինչպիսի՞ կառուցվածքային տարրերից է այն բաղադրված, ինչպե՞ս չափել ցարդ անչափելի այս երևույթը, ինչպիսի՞ ցուցչակազմով, ինչպե՞ս լուծել վիճակագրական հենքի ձևավորման հիմնահարցը և այլն: Հարցականները շատ են, որոնք հընթացս պիտի փոխարինվեն հիմնավոր վերջակետերով՝ այդպիսով ձևակարգելով սահմանադրականության գնահատման հայեցակարգային շրջանակները, ինչին էլ նպատակամիտված է սույն աշխատանքը:

Երկրում սահմանադրականության առկայությունը պետական-հանրային զարգացվածության կարևորագույն ցուցիչ է, իսկ դրա բացակայությունը՝ գերահազանգող ազդակ, որը հղի է հանրային կյանքի գրեթե բոլոր բնագավառներում առաջընթացի արգելակման ռիսկով, ընդհուպ մինչև՝ գործող պետական կարգի հիմքերի խարխլման, հեղաշրջումների, պատերազմների ու քաղաքացիական պատերազմների, տարիներ և տասնամյակներ ընդառաջ երկիրը քաոսի, իսկ երբեմն նաև «կառավարվող քաոսի» վերածելու ազգա- և պետականակործան հետևանքներով: Նման զարգացումների կանխարգելման և հասարակական անկասելի վերընթաց զարգացման կարևորագույն երաշխիքը սահմանադրականության վիճակի մշտական դիտարկումն է, նրա ելևէջների միտումների բացահայտումը և սահմանադրականության առկա «անհարթությունների» շտկմանը նպատակաուղղված գործնական քայլերի իրագործումը:

Վերոնշակերպյալ խնդրի հանգուցալուծումն անհնար է առանց սահմանադրականության մակարդակի վերաբերյալ պարբերական պատկերացումների առկայության: Ընդ որում, այդ պատկերացումները չեն կարող ձևավորվել «աչքաչափության» կամ մասնագիտական ինտուիցիայի համատեքստում, որքան էլ, որ մասնագիտական մոտեցումները լինեն փաստարկված, իսկ ինտուիցիան՝ զարգացած: Այդ պատկերացումները կարող են ձևավորվել բացառապես հստակ ***օբյեկտիվ քանակական գնահատականի*** տրամադրման արդյունքում, որը թույլ կտա բազմաթիվ վիճելի փաստարկների դաշտից տեղաշարժվել դեպի անվիճելի փաստերի տիրույթ: Վերջինս, սակայն, բացակայում է ինչպես ազգային, այնպես էլ՝ միջազգային գիտական մակարդակներում: Ահա այս արդիական հարցի շուրջ ձևավորված բացի լցմանն է միտված ՍԳՀԾ-ն և «Սահմանադրականության գնահատման հայեցակարգի» մշակումը՝ մասնավորապես:

Հաշվի առնելով խնդրո առարկա հասկացության գերբազմաչափ բնույթը,՝ այն գնահատող մեկ եզակի ցուցիչ գոյություն ունենալ չի կարող, և առաջադրված վերջնանպատակի իրացումը հնարավոր է բացառապես ***«Սահմանադրականության համաթվի (ինդեքսի)»*** կառուցման ճանապարհով: Վերջինիս համար «Սահմանադրականության գնահատման հայեցակարգը» պետք է ծառայի, որպես հուսալի ուղենիշ, հիմնավոր ճանապարհային քարտեզ, որը խորապես կկանխորոշի սպասվելիք ելքի արդյունքաբերության մակարդակը: Հայեցակարգի մշակման հիմքում դրվել է հստակ ***քայլաշար***՝ բաղադրված հետևյալ հաջորդական քայլերի կենսագործումից.

1. «սահմանադրականություն» հասկացության սահմանում՝ գնահատման նկատառումներից ելնելով,
2. «սահմանադրականություն» հասկացության և «Սահմանադրականության համաթվի»՝ սահմանումից բխող կառուցվածքի ձևավորում,
3. սահմանադրականության գնահատման տվյալների շտեմարանների համակազմի ձևավորում,
4. սահմանադրականության կառուցվածքային տարրերից յուրաքանչյուրին ցուցիչների համապատասխանեցում,
5. ցուցիչներից յուրաքանչյուրին քանակական տվյալների՝ ենթացուցիչների համախմբի համապատասխանեցում տվյալների ձևավորված շտեմարաններից:

Այս քայլաշարին առանձին-առանձին սպառիչ արձագանք չեն կարող տրամադրել ոչ ավանդական իրավագիտությունը, ոչ էլ ավանդական տնտեսագիտությունը, այլ՝ սահմանադրական տնտեսագիտությունը, որպես տնտեսագետների և իրավագետների հետազոտության համալիր առարկայական տիրույթ:

1. Սահմանադրականության գնահատման հասկացութային շրջանակները: Այս քայլը, հիրավի, հանդիսանալու է անկյունաքարային ողջ հետազոտության համար, քանի որ հենց դրա վրա են հենվելու և դրանից են ճյուղավորվելու մնացյալ հաջորդական քայլերը: Այս քայլի շրջանակներում անհրաժեշտ է ոչ միայն պատասխանել «ի՞նչ է սահմանադրականությունը» հարցին, այլև պատասխանել այնպես, որ դրանից անմիջականորեն բխի գնահատման ողջ կառուցվածքային ձևաչափը: Այս նկատառումը հաշվի առնելով և միջազգային փորձի ուսումնասիրությամբ [3-10]՝ «սահմանադրականություն» հասկացությունը բանաձևվեց, որպես. ***«զարգացման մակարդակ, երբ սահման է դրված պետական իշխանության կամայականության նկատմամբ, այն սահմանափակված է մարդու իրավունքներով և իշխանական թևերի բաժանման մեխանիզմով, երբ պետական իշխանությունը գործում է արդյունավետորեն՝ ծառայելով քաղաքացիների բարեկեցության բարձրացման վերջնանպատակին, երբ սահմանադրական հիմնարար սկզբունքներն ու նորմերն իրացված են իրական կյանքում»:***

Պարզաբանենք վերոշարադրյալ սահմանման առաջադրման հիմքում ընկած բովանդակային իմաստը՝ կատարելով հետևյալ երեք դիտարկումները.

ա) ամենապարզ ու ամենաընդհանուր մակարդակում սահմանադրականությունը սահմանադրությամբ նախատեսված նորմերի ու արժեքների *իրացվածությունն է իրական կյանքում*: Իսկ ցանկացած սահմանադրություն բաղկացած է երկու հիմնական մասից. առաջինը՝ նվիրված *մարդու իրավունքներին*, իսկ երկրորդը՝ *պետաիշխանական համակարգին*: Այս իմաստով, սահմանադրականությունը ևս պետք է բաղկացած լինի այդ երկու չափումներից: Սակայն ի հեճուկս սահմանադրության, որը դիտում է այդ չափումները՝ դրանց գծով դրույթների զուտ ամրագրման և հռչակման դիտակետից, սահմանադրականությունը դիտում է դրանք իրական կյանքում իրացվածության դիտակետից,

բ) չնայած մարդկության և պետականության հազարամյակների պատմությանը՝ «սահմանադրություն» ինստիտուտը բավական երիտասարդ է և գոյություն ունի երկուսուկես դարից էլ

պակաս ժամանակահատվածում: Դա պայմանավորված է նրանով, որ սահմանադրությունների անհրաժեշտությունը ծագեց ավատատիրական աշխարհակարգի (ֆեոդալիզմի) կործանման և միահեծան վարչակարգերը՝ հանրապետականներով փոխարինման պատմական ժամանակաշրջանի հետ, երբ անհրաժեշտություն առաջացավ սահմանափակել իշխանության կամայականության սահմանները, այլ կերպ ասած՝ բացառել իշխանության կենտրոնացումը որևէ կետում՝ միապետի ձեռքում, ինչը բնորոշ էր սահմանադրությունների ընդունմանը նախորդող բոլոր ժամանակաշրջաններին: Ահա այս զարգացումների համատեքստում ծագեց նաև «սահմանադրականություն» հասկացությունը՝ բնորոշելով *պետական իշխանության կամայականության սահմանափակվածության գոյությունն իրական կյանքում*: Ինչպես սահմանադրականության հայտնի մասնագետ Չ. Մաքիլվեյնն է մատնանշում. «Զարգացման բոլոր փուլերում սահմանադրականությունն ունեցել է մեկ էական որակ. այն կառավարության վրա դրված իրավական սահմանափակում է, այն կամայականության հակադրույթն է…» [11, էջ 21]: Հարց է ծագում. իսկ ինչպե՞ս սահմաններ դնել իշխանության կամայականության նկատմամբ, ինչպիսի՞ մեխանիզմներով: Պատասխանը մեկն է՝ *մարդու իրավունքներով և իշխանական թևերի բաժանման մեխանիզմով*: Այս միտքը լավագույնս ամրագրված է սահմանադրականության դասական աղբյուրներից մեկում՝ «Մարդու իրավունքների ֆրանսիական հռչակագրի» 16-րդ հոդվածում, ըստ որի. «Յուրաքանչյուր հասարակություն, որում իրավունքները երաշխավորված չեն կամ իշխանական թևերի բաժանումը սահմանված չէ, չունի սահմանադրություն» [5]: Սահմանադրականության այս սահմանափակող առումը հայտնի է *բացասական սահմանադրականություն* անվամբ: Ի դեպ, այս փիլիսոփայությունն է ամփոփված նաև դիտարկվող հասկացության հայերեն ստուգաբանությունում. կազմված լինելով «սահման» և «դիր» բառարմատներից, այն նշանակում է *«սահմաններ դնել»* [12,13] (ի տարբերություն շատ այլ լեզուների, որոնցում գերակայում են պարզապես «սահմանել», «հիմնադրել» նշանակությունները՝ պայմանավորված լատինական ակունքներով): Սահմաններ դնել ինչի՞ նկատմամբ: Հե՛նց իշխանության և նրա կամայականության նկատմամբ,

գ) սահմանադրականությունը չպետք է դիտարկվի բացառապես, որպես պետական իշխանության սահմանափակում, քանզի այդ պարագայում անտեսվում է նրա հաջորդ կարևոր առումը, ըստ որի՝ սահմանադրականությունը պահանջում է նաև արդյունավետ և իրավասու (կոմպետենտ) պետական ինստիտուտների առկայություն, որոնց գործունեությունը նպատակաուղղված է պետության գոյության հիմնանպատակի իրացմանը՝ իր անդամների (քաղաքացիների) բարեկեցության բարձրացմանը, այսինքն՝ ունի նաև պոզիտիվ կողմ *(դրական սահմանադրականություն)*:

Այսպիսով, սահմանադրականությունը հանդես է գալիս, որպես առաջին հայացքից իրարամերժ իր այդ երկու առումների դիալեկտիկական միասնություն, որոնցից առաջինը շեշտադրում է պետական իշխանության սահմանափակման, իսկ երկրորդը՝ պետական իշխանության ակտիվ պոզիտիվ դերակատարման կարևորությունը սահմանադրականության հաստատման գործում:

2. Սահմանադրականության գնահատման կառուցվածքային ձևաչափը: «Սահմանադրականություն» հասկացության վերոբերյալ սահմանումից բխում է նրա կառուցվածքը, որպես նշված երկու չափումների (մարդու իրավունքներ ու պետաիշխանական համակարգ) և երկու առումների (բացասական ու դրական) հատութային չորս բաղադրատարրերի ամբողջություն (աղ. 1):

Աղյուսակ 1

Սահմանադրականության գնահատման կառուցվածքային ձևաչափը

		ՉԱՓՈՒՄ	
		Մարդու իրավունքներ	**Պետաիշխանական համակարգ**
ԱՌՈՒՄ	**Բացասական**	Քաղաքական և քաղաքացիական իրավունքներ	Իշխանության տարանջատում
	Դրական	Սոցիալական և տնտեսական իրավունքներ	Պետական իշխանության գործունեության արդյունավետություն

Պարզաբանենք այդ բաղադրիչների առանձնացման հիմքում ընկած տրամաբանությունը: Ինչ վերաբերում է մարդու իրավունքների դասակարգմանը, ապա այն իրականացվել է երկու մոտեցմամբ: *Առաջին մոտեցման* հիմքում ընկած է «Մարդու իրավունքների միջազգային օրինաշարի» տրամաբանությունը: Ինչպես հայտնի է, 1948 թ. ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովն ընդունեց «Մարդու

իրավունքների համընդհանուր հռչակագիրը» (ՄԻՀՀ), որից հետո ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովը լծվեց մարդու իրավունքների վերաբերյալ դաշնագրերի ստեղծման աշխատանքներին, որոնցում պետք է ամրագրվեին և գործնական ուժ ստանային ՄԻՀՀ-ում ընդգրկված իրավունքները: Որոշ ժամանակ անց ընդունվեցին «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը» (ՔՔԻՄԴ) և «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը» (ՏՍՄԻՄԴ)՝ ձևավորելով «Մարդու իրավունքների միջազգային օրինաշարի» մարմինը: Այդպիսով, մարդու իրավունքները դասակարգվեցին հինգ հիմնական տարակարգի՝ քաղաքացիական, քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային: Միաժամանակ, պետք է նշել, որ դա ամենևին էլ չէր նշանակում մարդու իրավունքների տարանջատում և մեկուսացում մեկը մյուսից, ինչը հստակ շեշտադրվեց դաշնագրերն ընդունելիս Գլխավոր վեհաժողովի ընդունած բանաձևում, ըստ որի՝ մարդու իրավունքների տարբեր համախմբերը փոխկապված են և անբաժանելի, ինչը վերահաստատվեց նաև Վիեննայի հռչակագրում, ըստ որի. «Մարդու իրավունքները համընդհանուր, անբաժանելի, փոխկապված և փոխկապակցված են»: Այդ ակներև միասնականությունն է մարմնավորում նաև «Սահմանադրականության համաթիվը»: *Երկրորդ մոտեցման* համաձայն, մարդու իրավունքները դասակարգվում են բացասական և դրական իրավունքների: Դրանց տարբերությունն այն է, որ առաջինի պարագայում շեշտը դրվում է պետական միջամտությունից զերծ լինելու, իսկ երկրորդի դեպքում՝ ակտիվ պետական պաշտպանության և աջակցության կարևորության վրա: Բացասական իրավունքների շարքն են դասվում քաղաքական և քաղաքացիական իրավունքները, իսկ դրականների շարքը՝ տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքները [14, 15]:

Այդպիսով, առանձնացվեցին մարդու իրավունքների երկու հիմնական դաս՝ ա) քաղաքացիական ու քաղաքական, բ) սոցիալական ու տնտեսական (աղյ. 1): Տվյալ պարագայում չենք դիտարկում մշակութային իրավունքները՝ հաշվի առնելով մի կողմից դրանց գնահատման դժվարությունը, իսկ որոշ դեպքերում՝ անհնարինությունը, մյուս կողմից՝ սահմանադրականության մակարդակի վրա դրանց ունեցած ոչ մեծ ազդեցությունը: Սակայն, պետք է նշել, որ մշակութային իրավունքները սերտորեն փոխկապված են այլ իրավունքների և ազատությունների հետ, ինչպիսիք օրինակ՝ կրթության, մտավոր սեփականության պաշտպանության իրավունքները, կարծիք արտահայտելու, դավանանքի և խղճի, միավորումներ կազմելու ազատությունները և այլն: Այս իմաստով մշակութային իրավունքների իրացվածությունը ևս անուղղակիորեն կարտացոլվի կառուցվելիք համաթվում [16]:

Պետաիշխանական համակարգի նշանակությունը սահմանադրականության երկու առումների տեսանկյունից առավել պարզ է և բխում է սահմանումից: Սահմանադրականության բացասական առման հետ կապված կարևորվում է իշխանական թևերի բաժանման սկզբունքը, որը թույլ է տալիս կանխարգելել իշխանության կենտրոնացումը որևէ թևի շրջանակներում, ձևավորել հակակշռման ու զսպման մեխանիզմներ և այդպիսով սահմանափակել պետական իշխանության կամայականության սահմանները: Իսկ դրական առման հետ կապված կարևորվում է պետական իշխանության գործունեության արդյունավետությունը, ինչն ուղղակիորեն շեշտադրված է սահմանման մեջ:

Այսպիսով, կառուցակարգվեց «սահմանադրականություն» հասկացությունը: «Սահմանադրականություն» հասկացության կառուցակարգմամբ, կառուցակարգվեց նաև սահմանադրականության մակարդակի գնահատականն արտացոլող «Սահմանադրականության համաթիվը»՝ որպես կառուցվածքային վերոբերյալ տարրերի իրացվածության մակարդակներն արտացոլող կառուցվելիք համաթվերի և ենթահամաթվերի միասնացման արդյունք (նկ. 1):



Նկ. 1. Սահմանադրականության համաթվի կառուցվածքային ամփոփ պատկերը

3. Սահմանադրականության գնահատման տվյալների շտեմարանները: Ցանկացած համաթվի հաջողության բանալին «տեսական ձևաչափ-տվյալներ-մեթոդաբանություն» արդյունավետ եռամիասնությունն է: «Սահմանադրականություն» հասկացության սահմանմամբ և կառուցակարգմամբ ձևավորվեց դրա գնահատման տեսական ձևաչափի հիմքը, որից հետո անհրաժեշտ է անցում կատարել հաջորդ քայլին՝ սահմանադրականության գնահատման տվյալների շտեմարանների համակազմի ձևավորմանը: Վերջինս իրագործվել է տվյալների հուսալի, միջազգային լայն ճանաչում վայելող և երկրների լայն ծածկույթ պարփակող աղբյուրների համադրման ճանապարհով, որոնց վերաբերյալ տեղեկատվությունն ամփոփված է աղյ. 2-ում:

Աղյուսակ 2

Սահմանադրականության համաթվի տվյալների շտեմարանները

N	ԱՂԲՅՈՒՐ	ՀԱՇՎԱՐԿՈՂ	ԵՐԿՐՆԵՐԻ ԹԻՎԸ
1.	«Ազատությունը աշխարհում» համաթիվ	*Ֆրիդոմհաուզ*	195
2.	Տնտեսական ազատության համաթիվ	*Հերիթիջ հիմնադրամ*	178
3.	«Տնտեսական ազատությունը աշխարհում» համաթիվ	*Ֆրեյզեր և Կատո ինստիտուտներ*	152
4.	ՍԻՌԻ Մարդու իրավունքների տվյալների ծրագիր	*Դ. Սինգրանելի և Դ. Ռիչարդս*	202
5.	«Գործարարությամբ զբաղվելու դյուրինությունը» համաթիվ	*Համաշխարհային բանկ*	189
6.	Համաշխարհային առևտրի խթանման համաթիվ	*Համաշխարհային տնտեսական համաժողով*	138
7.	Վերափոխման համաթիվ	*Բերտելսման հիմնադրամ*	129
8.	Համաշխարհային մրցունակության համաթիվ	*Համաշխարհային տնտեսական համաժողով*	151
9.	Համաշխարհային կառավարման ցուցիչներ	*Համաշխարհային բանկ*	215
10.	Կոռուպցիայի ընկալման համաթիվ	*Թրանսփերենսի Ինթերնեյշնլ*	175
11.	Մամուլի ազատության համաշխարհային համաթիվ	*Լրագրողներ առանց սահմանների*	180
12.	Համաշխարհային զարգացման ցուցիչներ	*Համաշխարհային բանկ*	-
13.	Համաշխարհային փաստագիրք	*Կենտրոնական հետախուզական վարչություն*	-

4. Սահմանադրականության գնահատման ցուցիչների և ենթացուցիչների համակարգը: Այժմ մոտեցանք տվյալ աշխատանքի վերջնահանգրվանին՝ սահմանադրականության գնահատման ցուցիչների և ենթացուցիչների համակարգի ձևավորման քայլին:

Սահմանադրականության գնահատականների համակարգն ունենալու է հինգմակարդականի կառուցվածք՝ սկիզբ առնելով ենթացուցիչներից և ավարտվելով համաթվով (նկ. 2): Յուրաքանչյուր մակարդակ նախորդող մակարդակում ներառված տարրերի ագրեգացման արդյունք է:



Նկ. 2. Սահմանադրականության գնահատականների մակարդակները

«Սահմանադրականության համաթվի» կառուցվածքի կերտման համար, որպես հիմք է ծառայել «վերից վար» (դեդուկտիվ) մեթոդաբանական մոտեցումը, որի համատեքստում, վերոբերյալ վերլուծության հիման վրա, արդեն իսկ ձևավորվել են համաթվից բխող չափումներն ու խմբային ցուցիչները (ներկայացված նկ. 1-ի երկրորդ և երրորդ տողերում, համապատասխանաբար): Մնացյալ երկու քայլն են՝ ա) խմբային ցուցիչներից յուրաքանչյուրի շրջանակներում ցուցիչների համախմբի առանձնացումը, բ) ցուցիչներից յուրաքանչյուրին ենթացուցիչների համապատասխանեցումը:

Անդրադառնանք առաջին քայլին: «Մարդու իրավունքների իրացվածության համաթվի» կազմի մեջ մտնող երկու ենթահամաթվից յուրաքանչյուրին ցուցիչների համախմբի համապատասխանեցման հիմքում դրվել է «Մարդու իրավունքների միջազգային օրինաշարը»՝ այդպիսով ***համաթվի կառուցումը հենելով ունիվերսալ նորմատիվ հիմքի վրա***: Հաշվի առնելով նաև վիճակագրական հասանելիության սկզբունքը՝ ձևավորվել է համաթվի կառուցվածքը, որի կազմի մեջ մտնող հիմնական իրավունքները ներկայացված են աղյ. 3-ում՝ հղումներ կատարելով ՏՍՄԻՄԴ, ՔՔԻՄԴ, ինչպես նաև ՀՀ Սահմանադրության (ՀՀՍ) համապատասխան հոդվածներին [17-21] («Մարդու իրավունքների

իրացվածության համաթիվը» ներառելու է նաև իրավունքի գերակայության մակարդակի գնահատականը, ինչը կարևոր նշանակություն ունի ինչպես քաղաքացիական ու քաղաքական, այնպես էլ՝ սոցիալ-տնտեսական իրավունքների համար):

Աղյուսակ 3

«Մարդու իրավունքների իրացվածության համաթվի» ցուցչակազմը

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ	Ամրագրված է հետևյալ հոդվածներում՝
1. Պատշաճ կենսամակարդակի իրավունք	ՄԻՀՀ 25-1, ՏՍՄԻՄԴ 11-1, ՀՀՍ 34
2. Սեփականության իրավունք	ՄԻՀՀ 17, ՀՀՍ 8, 31
3. Աշխատանքի իրավունք	ՄԻՀՀ 23, ՏՍՄԻՄԴ 6, ՀՀՍ 32
4. Սոցիալական ապահովության իրավունք	ՄԻՀՀ 22, ՏՍՄԻՄԴ 25
5. Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք	ՀՀՍ 33.1, 8
6. Կրթության իրավունք	ՄԻՀՀ 26, ՏՍՄԻՄԴ 13, 14, ՀՀՍ 39
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ	**Ամրագրված է հետևյալ հոդվածներում՝**
7. Մտքի և դավանանքի ազատության իրավունք	ՄԻՀՀ 18, ՔՔԻՄԴ 18-1, ՀՀՍ 26
8. Համոզմունքների ազատության և արտահայտման իրավունք	ՄԻՀՀ 19, ՔՔԻՄԴ 19-2, ՀՀՍ 27
9. Խաղաղ հավաքների և միություններ կազմելու իրավունք	ՄԻՀՀ 20, ՔՔԻՄԴ 21, 22, ՀՀՍ 28, 29
10. Տեղաշարժման ազատություն	ՄԻՀՀ 13, ՔՔԻՄԴ 12, ՀՀՍ 25
11. Երկրի կառավարմանը մասնակցելու/ընտրելու իրավունք	ՄԻՀՀ 21, ՔՔԻՄԴ 25, ՀՀՍ 30

Դիտարկվող քայլի իրագործումը «Պետական իշխանության գործունեության արդյունավետության ենթահամաթվի» պարագայում առավել դյուրին է. այն բաղկացած է լինելու իշխանական երեք թևերից յուրաքանչյուրի (օրենսդիր, գործադիր և դատական) գործունեության արդյունավետության մակարդակների գնահատականներն արտացոլող ցուցիչներից, ինչպես նաև կոռուպցիայի մակարդակի ցուցչից՝ որպես ողջ պետական կառավարման համակարգի անարդյունավետության և ախտահարվածության վկայություն:

Այսպիսով, ամբողջապես ձևավորվեց նաև «Սահմանադրականության համաթվի» ցուցչակազմը, որից հետո անհրաժեշտ է անցում կատարել ավարտական քայլի իրագործմանը՝ ցուցիչներից յուրաքանչյուրին քանակական տվյալների՝ ենթացուցիչների համապատասխանեցմանը: Վերջինս իրականացվել է՝ օգտվելով տվյալների ձևավորված շտեմարաններում ընդգրկված քանակական գնահատականներից՝ այդպիսով ամբողջականացնելով կառուցվելիք «Սահմանադրականության համաթվի» մարմինը, որը ներկայացված է աղյ. 4-ում:

Աղյուսակ 4

«Սահմանադրականության համաթվի» կառուցվածքային պատկերը

ՑՈՒՑԻՉ	N	ԵՆԹԱՑՈՒՑԻՉ	ԱՂԲՅՈՒՐ
		I. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ	
1. Պատշաճ կենսամակարդակի իրավունք	1.1.	1 շնչին ընկնող ՀՆԱ	ՀՋՑ
	1.2.	Աղքատության մակարդակ	ՀՋՑ/ՀՓ
	1.3.	Գնաճ	ՏԱԱ
	1.4.	Միգրացիոն սալդո	ՀՋՑ
	1.5.	Ազգային խնայողությունները ՀՆԱ-ում	ՀՄՀ
2. Սեփականության իրավունք	2.1.	Սեփականության իրավունքներ	ՏԱՀ
	2.2.	Սեփականության իրավունքներ	ՎՀ
	2.3.	Սեփականության իրավունքներ	ՀՄՀ
	2.4.	Մտավոր սեփականության պաշտպանվածությունը	ՀՄՀ
3. Աշխատանքի իրավունք	3.1.	Գործազրկության մակարդակ	ՀՋՑ
	3.2.	Աշխատանքի ազատությունը	ՏԱՀ
	3.3.	Աշխատանքի ընդունման դժվարությունը և նվազագույն աշխատավարձի ազդեցությունը	ՏԱԱ
	3.4.	Աշխատանքի ընդունման և ազատման գործընթացները	ՀՄՀ
	3.5.	Ժամային կարգավորումները	ՏԱԱ
	3.6.	Աշխատողների իրավունքներ	ՍԻՌԻ
	3.7.	Համագործակցությունը գործատու-աշխատող փոխհարաբերություններում	ՀՄՀ

	3.8.	Աշխատանքի արտադրողականության և աշխատավարձի կապը	ՀՄՀ
	3.9.	Տաղանդավոր անձանց պահելու երկրի ունակությունը (ուղեղների արտահոսքը)	ՀՄՀ
4. Սոցիալական ապահովության իրավունք	4.1.	Ջինիի գործակից	ՀՁՑ/ՀՓ
	4.2.	Սոցիալական ապահովության համակարգ	ՎՀ
	4.3.	Հնարավորությունների հավասարություն	ՎՀ
	4.4.	Տրանսֆերտներ և լրահատկացումներ	ՏԱԱ
5. Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք	5.1.	Գործարարության ազատությունը	ՏԱՀ
	5.2.	Մասնավոր ընկերությունների գործունեության դյուրինություն	ՎՀ
	5.3.	Հակամենաշնորհային միջոցառումներ	ՎՀ
	5.4.	Տեղական մրցակցության ինտենսիվությունը	ՀՄՀ
	5.5.	Շուկայի գերիշխանությունը	ՀՄՀ
	5.6.	Հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետությունը	ՀՄՀ
6. Կրթության իրավունք	6.1.	Գրագիտության մակարդակ	ՀՁՑ/ՀՓ
	6.2.	Կրթություն/հետազոտությունների զարգացում	ՎՀ
	6.3.	ՄԱԿ-ի կրթության համաթիվ	ՎՀ
	6.4	Կրթական համակարգի որակը	ՀՄՀ
	6.5.	Առաջնային կրթության բնագավառում սովորողների ընդգրկվածությունը	ՀՄՀ
	6.6.	Երկրորդային կրթության (բակալավրիատ) բնագավառում սովորողների ընդգրկվածությունը	ՀՄՀ
	6.7.	Մագիստրոսական և ասպիրանտական կրթության ընդգրկվածությունը	ՀՄՀ
II. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ			
7. Մտքի և դավանանքի ազատության իրավունք	7.1.	Կրոնի ազատություն	ՍԻՈՒԻ
8. Համոզմունքների ազատության և արտահայտման իրավունք	8.1.	Խոսքի և մամուլի ազատություն	ՍԻՈՒԻ
	8.2.	Ազատ ձայնի իրավունք	ՎՀ
	8.3.	Մամուլի ազատության համաշխարհային համաթիվ	ԼԱՍ
	8.4.	Մամուլի ազատությունը	ՖՀ
	8.5.	Արտահայտման և համոզմունքների ազատություն	ԱԱՀ
9. Խաղաղ հավաքների և միություններ կազմելու իրավունք	9.1.	Հավաքներ և միություններ կազմելու ազատություն	ՍԻՈՒԻ
	9.2.	Համախմբվելու/հավաքվելու իրավունք	ՎՀ
	9.3.	Ասոցացիոն և կազմակերպական իրավունքներ	ԱԱՀ
10. Տեղաշարժման ազատություն	10.1.	Ներքին տեղաշարժման ազատություն	ՍԻՈՒԻ
	10.2.	Արտաքին տեղաշարժման և ճանապարհորդելու ազատություն	ՍԻՈՒԻ
11. Երկրի կառավարմանը մասնակցելու/ընտրելու իրավունք	11.1.	Ընտրական գործընթաց	ԱԱՀ
	11.2.	Ազատ և արդար ընտրություններ	ՎՀ
	11.3.	Ընտրական ինքնորոշում	ՍԻՈՒԻ
	11.4.	Քաղաքական բանտարկություններ	ՍԻՈՒԻ
	11.5.	Քաղաքական բազմակարծություն և մասնակցություն	ԱԱՀ
	11.6.	Կուսակցական համակարգ	ՎՀ
12. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների ընդհանրական ցուցիչներ	12.1.	Քաղաքացիական իրավունքներ	ՎՀ
	12.2.	Քաղաքացիական հասարակության ավանդույթները	ՎՀ
	12.3.	Քաղաքացիական հասարակության մասնակցությունը	ՎՀ
	12.4.	Ձայն և հաշվետվողականություն	ՀԿՑ
13. Իրավունքի գերակայություն	13.1.	Իրավունքի գերակայություն	ՎՀ
III. ԻՇԽԱՆԱԿԱՆ ԹԵՎԵՐԻ ՏԱՐԱՆՋԱՏՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ			
14. Իշխանական թեւերի բաժանում	14.1.	Իշխանության և գործադիր ուժերի տարանջատում	ՎՀ
15. Դատական իշխանություն	15.1.	Դատական համակարգի անկախությունը	ՏԱԱ
	15.2.	Դատական անկախություն	ՍԻՈՒԻ
	15.3.	Դատական համակարգի անկախություն	ՎՀ
	15.4.	Դատական համակարգի անկախություն	ՀՄՀ
	15.5.	Անաչառ դատարաններ	ՏԱԱ
16. Գործադիր իշխանություն	16.1.	Կառավարության գործունեությունը	ԱԱՀ
	16.2.	Կառավարության արդյունավետություն	ՀԿՑ
	16.3.	Կառավարման որակ	ՀԿՑ
	16.4.	Կառավարության ծախսումների շրջայլումը	ՀՄՀ
	16.5.	Կառավարության կարգավորումների բեռ	ՀՄՀ
	16.6.	Կառավարության քաղաքականության թափանցիկություն	ՀՄՀ
17. Օրենսդիր իշխանություն	17.1.	Օրենսդրական համակարգի արդյունավետությունը վեճերի	ՀՄՀ

		կարգավորման գործում	
	17.2.	Օրենսդրական համակարգի արդյունավետությունը խնդրահարույց հարցերի կարգավորման գործում	ՀՄՀ
18. Կոռուպցիա եւ հովանավորչություն	18.1.	Կոռուպցիայից ազատություն	ՏԱՀ
	18.2.	Ոչ պաշտոնական վճարները պետական պաշտոնյաներին	ՏԱԱ
	18.3.	Պատժամիջոցներ պաշտոնական դիրքի չարաշահման համար	ՎՀ
	18.4.	Պետական միջոցների ոչ նպատակային օգտագործումը	ՀՄՀ
	18.5.	Անօրինական վճարներ և կաշառակերություն	ՀՄՀ
	18.6.	Պետական այրերի վճիռների վրա հովանավորչության ազդեցությունը	ՀՄՀ
	18.7.	Կոռուպցիայի նկատմամբ հսկողություն	ՀԿՑ

5. Ամփոփում: Վերը թվարկված բոլոր քայլերի կենսագործմամբ, ձևավորվեցին սահմանադրականության գնահատման հայեցակարգային մոտեցումները, իսկ որպես վերջնարդյունք՝ լիարժեքորեն կառուցակարգվեց «Սահմանադրականության համաթվի» մարմինը և ձևավորվեց սահմանադրականության գնահատման տվյալների հենքը: Ստացված վերջնարդյունքներն ամբողջությամբ թույլ են տալիս անցում կատարել ՍԳՀԾ-ի հաջորդ փուլին՝ սահմանադրականության գնահատման մեթոդաբանության մշակմանը, որը, տնտեսագիտամաթեմատիկական մեթոդների ու մոդելների կիրառությամբ, հնարավորություն կընձեռի ստանալ սահմանադրականության մակարդակի քանակական գնահատականը դիտարկվող երկրներից յուրաքանչյուրի համար՝ այդպիսով չափելով ցայսօր անչափելի, սակայն խիստ արդիական այս երևույթը և կայուն հիմքեր նախապատրաստելով սահմանադրականության շարունակական մշտադիտարկման իրականացման համար:

** Զեկուցվել է «Հայկական տնտեսագիտական միության V տարեկան գիտաժողովում», 19 հունիսի, 2015 թ., ք. Երևան:*

Գրականություն

1. **Մխիթարյան Ժ.** Սահմանադրական տնտեսագիտության ձևավորման և զարգացման ընթացքի տեսա-մեթոդաբանական առումները // *ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները և առաջնահերթությունները. Գիտաժողովի նյութերի ժողովածու* / ԵՄՀ. -Եր., 2014:
2. **Մխիթարյան Ժ., Նահապետյան Ս.** Սահմանադրական տնտեսագիտություն. առարկայական տիրույթը և ուղղությունները // *Ֆինանսներ և էկոնոմիկա.* -2014. -N. 9-10 (171-172):
3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ / Ընդհ. խմբ.՝ **Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի**: -Եր.: Իրավունք, 2010:
4. **Barber, Nicholas W.** Constitutionalism: Negative and Positive. -Oxford Legal Studies Research Paper No. 7/2015, 2015.
5. Concise Routledge Encyclopedia of Philosophy / General editor: **Craig Edward**. -London: Routledge, 2000.
6. **Waluchow, Wil**, Constitutionalism / The Stanford Encyclopedia of Philosophy (Spring 2014 Edition; Edward N. Zalta (ed.), URL: http://plato.stanford.edu/archives/spr2014/entries/constitutionalism/.
7. **Badie, B., Berg-Schlosser, D., & Morlino, L.** (Eds.). International encyclopedia of political science.-Thousand Oaks, CA: SAGE Publications, 2011.
8. **Berggren, N., Karlson, N.** Constitutionalism, division of power and transaction costs. -Public Choice, 2003. -No. 117,
9. Constitutions and Constitutionalism // International Encyclopedia of the Social Sciences, 1968.
10. **Кутафин О.Е.** Российский конституционализм. –М.: Норма, 2008.
11. **McIlwain, Charles H.** Constitutionalism: Ancient and Modern. Revised edition. -Cornell University Press, New York, 1947.
12. **Աղայան Է.Բ.** Արդի հայերենի բացատրական բառարան: -Եր.: Հայաստան հրատ., 1976. -Հատ. 2:
13. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան / Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ: -Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1980. -Հատ. 4:
14. **Էյդե Ա., Ռոզաս Ա.** Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներ. համընդհանուր մարտահրավեր // Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներ: Դասագիրք / **Ա. Էյդե, Կ. Կրաուզե, Ա. Ռոզաս**. –Եր.: Տիգրան Մեծ, 2009:

15. **Էյդե Ա.** Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքները որպես մարդու իրավունքներ // Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներ: Դասագիրք / **Ա. Էյդե, Կ. Կրաուզե, Ա. Ռոզաս**. –Եր.: Տիգրան Մեծ, 2009:
16. **Սթավենհագեն Ռ.** Մշակութային իրավունքներ. հասարակական գիտությունների դիտանկյուն // Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներ: Դասագիրք / **Ա. Էյդե, Կ. Կրաուզե, Ա. Ռոզաս.** –Եր.: Տիգրան Մեծ, 2009:
17. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր: Ընդունվել և հռչակվել է Գլխավոր ասամբլեայի 1948 թ. դեկտեմբերի 10-ի 217 A (III) բանաձևով:
18. Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր: Ընդունվել է 1966 թ. դեկտեմբերի 16-ին, ուժի մեջ է մտել 1976 թ. հունվարի 3-ին: 993 UNTS 3:
19. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր: Ընդունվել է 1966 թ. դեկտեմբերի 16-ին, ուժի մեջ է մտել 1976 թ. մարտի 23-ին: 999 UNTS 171:
20. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (փոփոխություններով): Ընդունվել է 1995 թ. հուլիսի 5-ին, փոփոխությունները կատարվել են 2005 թ. նոյեմբերի 27-ին:
21. Մարդու իրավունքներ: ՄԱԿ-ի միջազգային փաստաթղթերի ընտրանի ձեռնարկ մարդու իրավունքների վերաբերյալ / ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակ. -Եր., 2013:

17.07.2015.

Ж.С. Мхитарян

КОНЦЕПТУАЛЬНЫЕ ПОДХОДЫ К ОЦЕНИВАНИЮ КОНСТИТУЦИОНАЛИЗМА

XX век ознаменовался в мире шествяй принятием конституций, что с уверенностью можно рассматривать как одно из величайших завоевований этого века. Вместе с тем надо отметить, что к конституциям с аналогичным содержанием могут быть весьма разные восприятия, начиная с "сочинения, равносильного Библии", до "сборника тостов". Определяющим фактором в этих крайностях является, в одном случае, наличие конституционализма, а в другом – полное его отсутствие. Поэтому глобальной тенденцией XXI века должно стать установление конституционализма, которому будет способствовать "Исследовательская программа оценивания конституционализма". Представлены результаты первого этапа реализации программы – "Концепции оценивания конституционализма".

Ключевые слова: *конституционализм, оценивание, индекс, концепция.*

Z.S. Mkhitaryan

CONCEPTUAL APPROACHES TO EVALUATION OF CONSTITUTIONALISM

The 20th century in the world was commemorated by the triumph of adoption of constitutions, which, undoubtedly, can be viewed as one of the greatest achievements of that century. However, it should be mentioned, that there can be quite different perceptions regarding constitutions with similar content in different countries, starting from a "writing equivalent to the Bible" up to a "collection of toasts". The determinant of these differences is the existence of constitutionalism in one case and its full absence in another one. Therefore, the global tendency of the 21st century should be the establishment of constitutionalism, which will be promoted by "The research program of evaluation of constitutionalism". The results of the first stage of the Program – "Concept of evaluation of constitutionalism" are presented.

Keywords: *constitutionalism, evaluation, index, concept.*

Միսիթարյան Ժիրայր Սամվելի – ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ասպիրանտ